Վճարային քարտերի ակնթարթային թողարկում Առավելություններ և Լուծումներ

Ի՞նչ է իրենից ներկայացնում վճարային քարտերի ակնթարթային թողարկումը

Վճարային քարտի ակնթարթային թողարկման լուծումը ֆինանսական հաստատություններին հնարավորություն է տալիս հաշվի բացման պահին հաճախորդների համար թողարկել լիովին գործող դեբետային և/կամ կրեդիտային վճարային քարտեր: Այս գործընթացը կատարվում է հենց բանկի մասնաճյուղում: Թողարկված քարտերը չիպով վճարային քարտեր են, որոնք լիովին համապատասխանում են EMV ստանդարտներին: Ակնթարթային թողարկում հրաշալի լուծումը է առաջարկում կորած կամ գողացված, վնասված կամ ժամկետանց վճարային քարտերը անմիջապես թողարկելու համար:

Ինչպե՞ս է աշխատում ակնթարթային լուծման գործընթացը:



Բանկերի և իրենց հաճախորդների իրական առավելությունները

Ակնթարթային թողարկումը բազմաթիվ առավելություններ ունի ինչպես բանկերի, այնպես էլ նրանց հաճախորդների համար: Մինչ հաճախորդներն օգտվում են բարելավված ծառայությունից, բանկերն էլ իրենց հերթին գրանցում են եկամտի աճ: Հարկ է նշել, որ համաճարակից հետո՝ ինքնասպասարկման ծառայությունների պահանջի բարձրացման հետ կապված վճարային քարտերի ակնթարթային թողարկման լուծումն ամենաարագ զարգացող տեխնոլոգիաներից է, որն իր հերթին բավարարում է հաճախորդների սպասելիքները:

Ֆիզիկական Քարտերի Արդիականությունը

Չնայած որ թվային քարտերը հնարավորություն են տալիս հաճախորդներին ամբողջությամբ օգտվելու թվային բանկային ծառայություններից, ֆիզիկական քարտերը մնում են վճարային էկոհամակարգի անբաժանելի բաղադրիչը:
Ըստ Հայաստանի Կենտրոնական Բանկի կողմից կատարած ուսումնասիրության՝ 2020-2023թթ. գրանցվել է ֆիզիկական վճարային քարտերի թողարկման 45% աճ: Ֆիզիկան վճարային քարտերը երաշխավորում են հուսալիություն, անվտանգություն, կայունություն, հասանելիություն, որոնք վճռորոշ դեր են խաղում անհատների և ձեռնարկությունների համար ֆինանսական գործարքներն անխափան կատարելու գործում: Այս ամենի շնորհիվ է, որ ֆիզիկական վճարային քարտերի պահանջարկը դեռևս արդիական է և աճելու միտում ունի:

Հաճախորդների Նախասիրությունները

Երիտասարդ հաճախորդները, ովքեր ավելի լավ են տիրապետում նոր տեխնոլոգիաների հնարավորություններին, նրանց սպասելիքն է տեղում անմիջապես սպասարկվել և ստանալ համապատասխան ծառայությունը:

Ակնթարթային թողարկման լուծումն այնպես է նախագծված, որ բանկը հնարավորություն ունի արագ և անխափան կերպով թողարկել վճարային քարտերը՝ գոհացնելով հաճախորդներին: Այն այլընտրանքային լուծում է առաջարկում այն հաճախորդների համար, ովքեր ցանկանում են քարտի անհապաղ թողարկում կամ փոխարինում:

Գոհ հաճախորդ՝ ավելի շատ եկամտի երաշխիք Բանկերի համար

Վճարային քարտերի ակնթարթային թողարկումը իրական առավելություններ է ստեղծում թե բանկերի, և թե հաճախորդների համար:

Քարտերի թողարկման ճկունություն

Ակնթարթային թողարկումն իրականացվում է ըստ պահանջի անհրաժեշտության: Հետևաբար այն առաջարկում է առավելագույն ճկունություն և շուրջօրյա սպասարկում:

Փոստային ծախսերի խնայողություններ

Վճարային քարտն ու PIN–ը փոստով ուղարկելու ծախսերը տնտեսվում են: Նվազեցվում է նաև փոստով ուղարկելու դեպքում քարտերի կորչելու կամ գողանալու ռիսկը, որի դեպքում քարտը վերաթողարկելու համար ծախսեր կատարելու կարիք չի լինում:

Ժամանակակից, տարբերակվող առավելություն

Այն փաստը, որ հաճախորդները կարող են քարտը ստանալ առանց երկար սպասելու, արդեն իսկ դրական առաջընթաց է: Ի վերջո, ակնթարթային թողարկման լուծման բոլոր առավելությունները հնարավորություն են տալիս ապահովել հաճախորդների գոհունակությունը և ամրապնդել նրանց հավատարմությունը:

Քարտի ավելի արագ ակտիվացում

Ակնթարթային թողարկված քարտերը 20%-ով ավելի արագ են ակտիվացվում, քան փոստով ուղարկված քարտերը: Ամիջապես քարտը ստանալուց հետո հաճախորդը այն միանգամից ակտիվացնում է և սկսում օգտագործել, ուստի սա էլ իր հերթին 22%–ով բարձրացնում է փոխանցումների և ֆինանսական գործարքների թիվը, որն էլ հատկանշական եկամուտ է ապահովում բանկի համար:

Մտերիմ հաճախորդ

Քարտի ակնթարթային թողարկման ծառայությունը խրախուսում է ապագա հաճախորսներին ֆիզիկապես այցելել բանկ: Ուստի սա հնարավորություն է ընձեռնում բանկերի համար՝ անձամբ հանդիպել հաճախորդներին և առաջարկել բանկային այլ ծառայություններ:

Ակնթարթային թողարկման հաջողված լուծումը պայմանավորված է տպիչ սարքի ճիշտ ընտրությամբ

Ակնթարթային թողարկման լուծման համար "Ինֆորմատիկ Սոլուշն" ընկերությունն առաջարկում է Sigma DS4 տպիչ սարքը, որն օգտագործվում է ամբողջ աշխարհում գտնվող բանկերի կողմից միանգամայն արագ և անխափան կերպով վճարային քարտեր տրամադրելու համար:

Sigma DS4-ն առաջարկում է՝

- UV մոդուլային տպագրություն, որն ապահովում է քարտի վրա 5 տարվա մնայուն տպագրություն
- Սարքն ունի 6 առանձին քարտի մուտքի դարակներ՝ յուրաքանչյուրի տարողությունը 125 քարտ՝ ընդհանուր միաժամանակ 750 քարտ տեղավորելու հնարավորություն
- Սարքն ունի 3 անվտանգության կողպեքներ նախատեսված UV մոդուլի, քարտային դարակների և հիմնական մասի համար
- Սարքն իրականացնում է վճարային քարտի դիմերեսի, դարձերեսի, հորիզոնական, ուղղահայաց տպագրություն:
- Այն ունի նաև կիոսկում տեղադրելու հնարավորություն՝ 24/7 սպասարկման համար
- Ամբողջական գունավոր կամ մոնոխրոմ տպագրություն քարտի վրա
- Մագնիսական ժապավենների կոդավորում
- Հպումով կամ անհպում չիպային քարտերի անհատականացում

“Ինֆորմատիկ Սոլուշն” ընկերության փորձագետները սիրով ավելի մանրամասն կծանոթացնեն Ձեզ ակնթարթային թողարկման լուծման հնարավորությունների մասին:

Informatics Solution

Head Office Armenia:
No. 22 Hanrapetutyun street Smart
Office Building Yerevan 0010 Armenia
Phone: 00374-60-830303

www.Informsolution.com
office@informarticssolution.com